

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 27-06-2024 թ. որոշմամբ
«ԿՈՂԲ» ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ»
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԿՈՂԲ» ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՄՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ	
1.2 Գտնվելու վայրը	ՏԱՎՈՒՇ ԿՈՂԲ 1-ին փող. 35/4	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.789862	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2013-11-14	
1.5 ՀՎՀՀ-ն	07616696	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)96400884	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	https://koghb.org/	
1.8 Էլեկտրոնային փոստը	info@koghb.org	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Արման Բարսեղյան		
Ռաֆֆի Քամայան		
Գագիկ Ազատյան		
Հայկ Եսայան		
Գագիկ Ազատյան		
Օնիկ Մուրադյան		
Հրաչիկ Երկնափեշյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Արման Բարսեղյան		
Արթուր Աբովյան		
Հայկ Եսայան		
Օնիկ Մուրադյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մարիա Պետրոսյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	7	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		

8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Արժեկտրոնի մարում	7,025,482
	Գրքերի վաճառքից մուտքեր	3,055,475
	Տոմսերի վաճառքից մուտքեր	7,665,800
	Նվիրատվություն	73,458,978
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Գրքերի վաճառքից մուտքեր	1,632,345
	Նվիրատվություն	2,978,271
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	48,000,000	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Կողբ Վարդավառ» մշակութային ծրագիր	35,086,380	
«Ռուս-թուրքական վանդակ» տեսանյութերի շարք	6,040,000	
«Հայ-բրիտանական առնչություններ» բանախոսությունների շարք	713,500	
Մարզերի երեխաների աջակցության սոցիալ-կրթական նախագիծ	800,000	
Տիգրան Մանսուրյանի անվան կոմպոզիտորների միջազգային մրցույթ	21,560,592	
«Կամք» Վ. Սարգսյանի անվան գրական մրցույթ	5,310,000	
Միլանի ակադեմիայի մանկապատանեկան ֆուտբոլային ճամբար նախագիծ	61,078,711	
Հայրենաճանաչություն	1,721,170	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	220,522,939	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	132,310,353	


Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն
իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 25 էջերից:
Էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորական եզրակացություն
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Կոդր» կրթության, մշակույթի և սպորտի
զարգացման հիմնադրամ



Երևան – 2024

«Կոդը»
կրթության, մշակույթի և սպորտի զարգացման
հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կողբ»

կրթության, մշակույթի և սպորտի զարգացման
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք առողիտի ենք ենթարկել «Կողբ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը առ 31 դեկտեմբերի 2023թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվների փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Առողիտն անցկացրել ենք Առողիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Առողիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների առողիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան առողիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու

կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն ղեկավարի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Հաստատված է:

«Ջի ընդ Քո Աուդիտ Գրուպ» ՍՊԸ

Տնօրեն

Լ. Պողոսյան

Աուդիտոր

ՀԱՄԱՐՈՒՐՈՍՅԱՆ

«28» հունիսի 2024թ.

Երևան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«ԿՈՂԲ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ
առ 31-ը դեկտեմբերի 2023թ դրությամբ

ԾԱԹ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	6 9,566	11,200
Ոչ նյութական ակտիվներ	7 8,001	3,326
Ֆինանսական ներդրումներ	8 96,028	142,113
Հետաձգված հարկային ակտիվներ	22 247	151
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	123,843	156,790
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	9 3,436	1,439
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10 129	2,775
Ֆինանսական ներդրումներ	8 14,055	962
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11 114	2,197
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	7,734	7,373
Ընդամենը ակտիվներ	131,577	164,163
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		
Զուտ ակտիվներ		
Կուտակված հավելած	66,543	89,782
Ընդամենը զուտ ակտիվներ	66,543	89,782
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
Ընթացիկ պարտավորություններ		
Ստացված փոխառություններ	12 48,825	48,000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13 2,205	2,205
Շահութահարկի գծով պարտավորություն	69	22,788
Այլ հարկերի գծով պարտավորություններ	134	550
Պահուստներ	14 838	838
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	65,034	74,381
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ	131,577	164,163

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրենի ստորագրություն
Մարիա Պետրոսյան
07616696
ՀԻՄՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՐՈՒՄ

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«ԿՈՂԲ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ

2023 թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	ԾԱԹ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի հազ. դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի հազ. դրամ
Հասույթ	15	10,711	466
Ինքնարժեք	16	(2,989)	(199)
Համախառն շահույթ		7,722	267
Այլ եկամուտներ	17	126,162	169,444
Ծրագրերի իրականացման ծախսեր	18	(139,514)	(47,274)
Վարչական ծախսեր	19	(25,497)	(10,415)
Այլ ծախսեր		(3,190)	(248)
Գործառնական գործունեությունից արդյունք		(34,316)	111,774
Ֆինանսական եկամուտներ	20	8,712	1,742
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)	21	2,606	(562)
Տարվա արդյունք մինչև հարկումը		(22,998)	112,954
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	22	(228)	(22,752)
Տարվա արդյունքը հարկումից հետո		(23,226)	90,202
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(23,226)	90,202

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

Տնօրենի ժ/պ

Մարիա Պետրոսյան



Զուտ ակտիվների փոփոխությունների մասին հաշվետվություն
«ԿՈՂԲ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ
2023 թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	հազ. դրամ	
Կուտակված հավելած (Զժածկված վնաս)		Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2021թ.	(420)	(420)
Տարվա հավելած	90,202	90,202
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2022թ.	89,782	89,782
Տարվա վնաս	(23,226)	(23,226)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	66,543	66,543

10-ից 25-րդ չջերմում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն Ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրենի Ժ/պ
Մարիա Պետրոսյան



Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

«ԿՈՂԲ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ

2023թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի հազ. դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի հազ. դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ապրանքների մատակարարումից մուտքեր	12,185	-
Նվիրատվություններից ստացված նրամական միջոցներ	76,437	17,395
Վճարումներ ստացված ծառայությունների և նյութերի գծով	(133,089)	(33,273)
Վճարումներ աշխատակիցներին	(16,977)	(10,864)
Անհատույց տրամադրված դրամական միջոցներ	(5,480)	(8,800)
Վճարումներ պետական մարմիններին	(32,815)	(4,045)
Այլ մուտքեր	867	-
Այլ ելքեր	(499)	(951)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(99,371)	(40,538)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Պարտատոմսերի ձեռքբերում	-	(134,023)
Պարտատոմսերի տոկոսների ստացում	5,713	744
Ոչ նյութական ակտիվների ձեռք բերում	(4,272)	(3,403)
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների ձեռք բերում	(2,450)	-
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների վաճառք	-	151,500
Պարտատոմսերի վաճառքից մուտքեր	48,380	-
Տրված փոխառություններից ելքեր	(10,000)	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	37,371	14,819
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված փոխառություն	69,825	35,150
Ստացված փոխառությունների մարում	(10,000)	(7,400)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	59,825	27,750
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(2,175)	2,030
Արտաժույթի փոխառվածքային տարբերություններ	92	(141)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	2,197	308

10-ից 25-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Տնօրենի ժ/պ
Մարիա Պետրոսյան



Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ «ԿՈՂԲ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ 2023թ. -ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Ընդհանուր տեղեկություններ

«Կոլբ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ) իրավաբանական անձ հանդիսացող ոչ առևտրային կազմակերպություն է: Հիմնադրամը գրանցվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2013թ. նոյեմբերի 14-ին՝ որպես «Կոլբ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ: Հիմնադրամի պետական գրանցման համարն է 222.160.789862, ՀՎՀՀ ն՝ 07616696:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. -ին կազմել է 5 անձ, 2022թ. -ին՝ 4:

Հիմնադրամի գտնվելու վայրն է ՀՀ, Տավուշի մարզ, գ. Կոլբ, 1-ին փողոց, 35/4:

Հիմնադրամի ստեղծման և գործունեության հիմնական նպատակը՝ ՀՀ Կոլբ և այլ համայնքներում կրթության, մշակույթի և սպորտի զարգացմանն աջակցությունն է:

Հիմնադրամի շահառուներն են ՀՀ Կոլբ և այլ համայնքների երեխաները, պատանիները, երիտասարդները և այլ բնակիչները:

Հիմնադրամի հիմնադիրներն են.

Արման Բորիսի Բարսեղյան

Ռաֆֆի Օհանեսի Քամայան

Գագիկ Գուրգենի Ազատյան

Հայկ Հովհիկի Եսայան

Գագիկ Սաշայի Ազատյան

Օնիկ Գիգուլի Մուրադյան

Հրաչիկ Վահանի Երկնափեշյան:

Հիմնադրամի բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որը բաղկացած է հետևյալ անդամներից.

Արման Բարսեղյան խորհրդի նախագահ

Արթուր Աբովյան

Հայկ Եսայան

Օնիկ Մուրադյան

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Այս ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ ակտիվ փուլում է գտնվում ռուս-ուկրաինական հակամարտությունը: Արդեն պարզ է, որ այն մեծ ազդեցություն ունի ոչ միայն տարածաշրջանի այլ ամբողջ աշխարհի վրա: Այն չի շրջանցել նաև Հայաստանը:

Հայաստանյան գործարար միջավայրի վրա շարունակում է իր ազդեցությունն ունենալ նաև հայ-ադրբեջանական լարված հարաբերությունները, որը հանդիսանում է ՀՀ ներդրումային և գործարար միջավայրի ամենաեական խոչընդոտը:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

2. Համապատասխանությունը

Հաշվապահական հաշվառումը վարվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՄ):

Ներկայումս ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ն չի պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ն չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման համար, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՓՄԿ-ների ՖՀՄՄ ի ընդհանուր սկզբունքների վրա:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

ՀՀ արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրված հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

4. Անընդհատությունը

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում:

5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագիրը

5.1. Չափման հիմքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

5.2. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր) ճանաչում է առանձին ակտիվ այն դեպքում, երբ՝ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Չափումը ճանաչման պահին

Հիմնադրամը հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին չափում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ կանխիկ գնի համարժեքն է: Եթե վճարումը վճարման սովորական պայմաններով նախատեսված ժամկետներից հետաձգվում է, սկզբնական արժեքը ապագա բոլոր վճարումների ներկա արժեքն է:

Սկզբնական արժեքի տարրերն են, մասնավորապես՝ գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխ հատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և դեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումները հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Սկզբնական արժեքը որոշելիս ամստրային գեղչերը և արտոնությունները հանվում են:

Չափումը ճանաչումից հետո

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն

Հիմնական միջոցների բոլոր դասերի նկատմամբ կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը որոշելիս հաշվի են առնվում Հիմնադրամի կողմից ակտիվի ենթադրվող օգտագործելիությունը, ակնկալվող ֆիզիկական մաշվածությունը, տեխնիկական հնացածությունը և հիմնական միջոցի օգտագործման իրավական կամ նման այլ սահմանափակումներ:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Շենքեր և շինություններ

17 տարի

Տնտեսական գույք

5 տարի

Այլ հիմնական միջոցներ

1-8 տարի

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է դեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հետագա ծախսումները

Հիմնական միջոցի միավորին վերաբերող հետագա ծախսումներն ավելացվում են դրա հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում են), եթե այդ ծախսումները բավարարում են ճանաչման չափանիշները: Մասնավորապես, հիմնական միջոցի միավորի վրա նոր մասի ավելացման, կամ հիմնական միջոցի միավորի մի մասի պարբերաբար փոխարինման ծախսումները ավելացվում է հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքին (կապիտալացվում է): Ամենօրյա սպասարկման ծախսումները չեն ավելացվում հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (չեն կապիտալացվում):

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

5.3. Ակտիվների արժեզրկում

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատում է առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի

հայտանիշ, ապա Հիմնադրամը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, ապա փոխհատուցվող գումարը գնահատվում է առանձին ակտիվի համար: Եթե հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Հիմնադրամը որոշում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է տվյալ ակտիվը (ակտիվի դրամաստեղծ միավոր):

Արժեզրկումից կորուստ

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է արժեզրկումից կորուստ:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի երբ ակտիվը հաշվառվում է վերագնահատված գումարով: Վերագնահատված ակտիվի արժեզրկումից ցանկացած կորուստ դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Արժեզրկումից կորստի հակադարձում

Արժեզրկումից կորստի հակադարձմանը վերագրելի ակտիվի ավելացած հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան ամորտիզացիայի կամ մաշվածության), եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

5.4. Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

5.5. Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչում

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Այլ բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով՝ հաշվի առած գործարքի հետ կապված ծախսումները:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Չափման կատեգորիաներ Հիմնադրամը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ օգտագործելով հետևյալ չափման կատեգորիաները. չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, չափվում են իրական արժեքով այլ համապարփակ եկամուտի միջոցով և չափվում են ամորտիզացված արժեքով: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումը կախված է ակտիվների պորտֆելի կառավարման համար Հիմնադրամի բիզնես մոդելից, և ակտիվի դրամական հոսքերի բնութագրերից:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում

Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասնակիորեն դուրս են գրվում, երբ Հիմնադրամը սպառել է դրանց հավաքագրելու բոլոր գործնական հնարավորությունները և եզրահանգել է, որ այդպիսի ակտիվների փոխհատուցման հետ կապված ակնկալիքները անհիմն են: Դուրսգրումը իրենից ներկայացնում է ապաճանաչում: Հիմնադրամը կարող է դուրս գրել ֆինանսական ակտիվները, չնայած այդ գումարների վերականգնման (ստացման) համար կիրառվում են հարկադրման միջոցներ:

բայց ողջամիտ ակնկալիքներ չկան:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում

Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ.

(ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ

(բ) Հիմնադրամը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ

(գ) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու պարզևատրումները կամ

(դ) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Առևտրական դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ գեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է գեղչված արժեքով:

Տրված փոխառություններ

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս և ցածր տոկոսադրույքով տրված երկարաժամկետ փոխառության գեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած գուտ արդյունքը (վնասը) ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները դրամարկդում և բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներն են: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի:

5.6. Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Հիմնադրամը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված կամ վճարվելիք հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորությունների չափման խմբեր

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունների, և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի և վարկերի տրամադրման պարտավորություններին:

Առևտրական կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ գեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է գեղչված արժեքով:

Ստացված վարկեր և փոխառություններ

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած

գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտույտ և ցածր տոկոսադրույքով ստացված ժամկետային փոխառության գեղչումից (իրական արժեքով չափումից) առաջացած գուտ արդյունքը (օգուտը) ճանաչվում է ֆինանսական արդյունքում: Սկզբնական չափումից հետո ստացված վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

5.7. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցել է ծառայություն, Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Հիմնադրամը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՓՄԿ-ների ՖՀՄՄ-ով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

5.8. Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտներն փոխանցվում են վարձակալին: Մյուս բոլոր վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում:

5.9. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական) որպես անցյալ դեպքերի արդյունք:

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պայմանական պարտավորությունը և պայմանական ակտիվը չեն ճանաչվում:

Որպես պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Ձեռնարկի դրույքը (կամ դրույքները) այն դրույքն է (կամ դրույքները), որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Ձեռնարկի դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

5.10. Շնորհներ

Պետական շնորհներն Հիմնադրամի ռեսուրսների փոխանցման տեսքով պետության կողմից տրամադրվող օգնություն են՝ գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Դրանք չեն ներառում պետական օգնության այն ձևերը, որոնց հնարավոր չէ խեղափոխել որևէ արժեք վերագրել, ինչպես նաև պետության հետ գործարքները, որոնք հնարավոր չէ տարանջատել Հիմնադրամի սովորական առևտրային գործարքներից: Այս իմաստով պետությունը ներառում է պետական մարմինները, միջազգային կազմակերպությունները, հասարակական և այլ նմանատիպ կազմակերպություններ, ներառյալ ոչ պետական բարեգործական կազմակերպությունները:

Շնորհները ճանաչվում են, երբ կա հիմնավոր հավաստիացում, որ.

ա) շնորհը, որն Հիմնադրամի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են: Դրանք ներկայացվում են այլ եկամուտների կազմում:

բ) շնորհը, որն Հիմնադրամի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է:

գ) ստացված շնորհները, նախքան եկամտի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն: Ընդ որում, եթե կից պայմանների բավարարումը նախատեսված է հաշվետու ամսաթվից ավելի քան տասներկու ամիս հետո, ապա շնորհները ներկայացվում են ոչ ընթացիկ պարտավորությունների, իսկ հակառակ դեպքում՝ ընթացիկ պարտավորությունների կազմում:

Հիմնադրամը շնորհները չափում է ստացված կամ ստացվելիք ակտիվի իրական արժեքով:

5.11. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփռո փոխանակման փոխարժեքը:

Որպես սփռո փոխանակման փոխարժեք ընդունվում է արժութային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը:

Արտարժույթ	31.12.2023	31.12.2022
1 ԱՄՆ դոլար	404.79 ՀՀ դրամ	393.57 ՀՀ դրամ
1 Եվրո	447.90 ՀՀ դրամ	420.06 ՀՀ դրամ
1 ՌԴ ռուբլի	4.50 ՀՀ դրամ	5.59 ՀՀ դրամ

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը:

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

5.12. Սխալներ

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց (բացառությամբ երբ անխրագործելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը) դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների և պարտավորությունների սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

5.13. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով տարվա ֆինանսական արդյունքում՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

5.14. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Հիմնադրամը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավաստ և տեղին (ոեղևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Հիմնադրամը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ: Երբ Հիմնադրամի համար անխրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Հիմնադրամը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած:

6. Հիմնական միջոցներ

	Հոդամասեր	Շենքեր և շինություններ	Տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Մկզբնական արժեք					
Առ 01.01.2023թ.	75	14,781	1,327	3,603	19,787
Ձեռքբերում	-	-	-	2,450	2,450
Շահագործում/դուրս գրում	-	-	-	(2,450)	(2,450)
Առ 31.12.2023թ.	75	14,781	1,327	3,603	19,787
Մաշվածություն					
Առ 01.01.2023թ.	-	4,412	1,118	3,057	8,587
Հաշվարկ	-	891	210	625	1,726
Օտարում	-	-	-	(92)	(92)
Առ 31.12.2023թ.	-	5,303	1,327	3,590	10,221
Հաշվեկշռային արժեք					
Առ 31.12.2022թ.	75	10,369	210	546	11,200
Առ 31.12.2023թ.	75	9,478	-	13	9,566

Ֆինանսական տարվա ընթացքում հաշվարկվել է 1,726 հազ. դրամ մաշվածություն, որը ներառվել է վարչական ծախսերում:

Համադրելի տարվա ընթացքում հաշվարկվել է 4,051 հազ. դրամ մաշվածություն, որը ներառվել է վարչական ծախսերում:

7. Ոչ նյութական ակտիվներ

	Հեղինակային իրավունքներ	Ընդամենը
Մկզբնական արժեք		
Առ 01.01.2023թ.	3,408	3,408
Գնում/ կապիտալացում	5,558	5,558
Օտարում/դուրսգրում	-	-
Առ 31.12.2023թ.	8,966	8,966
Ամորտիզացիա		
Առ 01.01.2023թ.	82	82
Հաշվարկ	883	883
Օտարում	-	-
Առ 31.12.2023թ.	965	965
Հաշվեկշռային արժեք		
Առ 31.12.2022թ.	3,326	3,326
Առ 31.12.2023թ.	8,001	8,001

8. Ֆինանսական ներդրումներ

Հազ. դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև մարման ժամկետը պահվող արժեկտրոնային պարտատոմսեր	96,028	140,613
Տրված փոխառություն	-	1,500
Ընդամենը ոչ ընթացիկ ֆինանսական ներդրումներ	96,028	142,113
Մինչև մարման ժամկետը պահվող արժեկտրոնային պարտատոմսերի գծով հաշվեգրված և չվաստակած տոկոսներ	4,055	962
Տրված փոխառություն	10,000	1,500
Ընդամենը ընթացիկ ֆինանսական ներդրումներ	14,055	962
Ընդամենը ֆինանսական ներդրումներ	110,083	143,075

Հիմնադրամն ունի 12 ամսից ավելի մարման ժամկետ ունեցող արժեկտրոնային պարտատոմսեր ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով, որոնք ունեն 3.95-ից մինչև 9.25 տոկոս եկամտաբերություն:

Փոխառությունը տրվել է 12 ամիս մարման ժամկետով և 12.5% տարեկան տոկոսադրույքով: Տրված փոխառությունն ապահովված չէ գրավով:

9. Պաշարներ

Հազ. դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաճառքի ենթակա գրքեր	3,436	1,439
Ընդամենը	3,436	1,439

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազ. դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր՝ վաճառքների գծով	37	-
Դեբ պարտ ստացվելիք տոկոսների գծով	45	-
Տրված ընթացիկ կանխավճարներ	48	2,775
Ընդամենը	129	2,775

11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազ. դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	58	967
Բանկային հաշիվներ արտարժույթով	56	1,230
Ընդամենը	114	2,197

12. Ստացված փոխառություններ

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ցպահանջ փոխառություններ	59,825	48,000
Ընդամենը	59,825	48,000

Փոխառությունը ստացվել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ առանց տոկոսի: Համաձայն պայմանագրի՝ փոխառությունը ենթակա է մարման փոխատուի կողմից պահանջ ներկայացնելու պահից 30 օրվա ընթացքում: Հաշվետու տարում ստացված փոխառություններից 48,000 հազար դրամ որպես նվիրատվություն ներվել է հիմնադրամին:

13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	1,739	1,880
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	575	325
Կրեդ. պարտքեր ընդունվ. աշխ. գծ. /հեղ. պայմանագրեր/	1,017	-
Ստաց. կանխավճ. վաճառվելիք ապրանք. աշխ. ծառայ. գծով	302	-
Ընդամենը	3,634	2,205

14. Պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կուտակված փոխհատուցելի բացակայությունների գծով կարճաժամկետ հատուցուման գումարները արձակուրդների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդերն օգտագործելիս: Զեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

15. Հասույթ

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գրքերի վաճառքից հասույթ	4,290	466
Ծառայությունների մատուցումից հասույթ	6,422	-
Ընդամենը	10,711	466

16. Ինքնարժեք

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառված գրքերի ինքնարժեք	2,989	199
Ընդամենը	2,989	199

17. Այլ եկամուտներ

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ նվիրաբերություններից	124,442	41,120
Անշարժ գույքի օտարումից եկամուտ /զուտ/	-	127,694
Ֆին.ակտիվների օտարումից եկամուտներ	1,312	629
Այլ եկամուտներ	407	
Ընդամենը	126,162	169,444

Հիմնադրամի նվիրատուներ են ֆիզիկական անձինք և կազմակերպությունները: Հաշվետու տարվա ընթացքում ստացվել են դրամական միջոցներ՝ առանց կից պայմանների:

18. Ծրագրերի իրականացման ծախսեր

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձի գծով ծախսեր	9,833	10,040
Կազմակերպչական ծախսեր	49,712	4,540
Հայտարարություններ, գովազ	2,017	3,249
Կրթական միջոցառումներ	32,059	1,865
Դրամական օգնություններ	5,480	2,593
Տեսահոլովակների պատրաստում	5,889	8,800
Վարձակալություններ	4,797	745
Ծրագրային ծախսերի հարկեր, պարտ. վճարներ	10,348	15,442
Ծրագրային այլ ծախսեր	19,559	-
Ընդամենը	139,514	47,274

19. Վարչական ծախսեր

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձի գծով ծախսեր	10,036	4,661
Հիմն. միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածություն	2,609	4,162
Հաշվապահական և խորհրդատվական ծախսեր	1,225	600
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր	54	63
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	317	453
Այլ վարչական ծախսեր	11,256	476
Ընդամենը	25,497	10,415

20. Ֆինանսական եկամուտներ

Հազ. դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արժեկտրոնային պարտատոմսերի գծով հաշվեգրված տոկոսներ	8,667	1,742
Տրված փոխառության գծով հաշվեգրված տոկոսներ	45	
Ընդամենը	8,712	1,742

21. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտ (վնաս)

Հազ. դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ներդրումների գծով	2,621	(419)
Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով	-107	(2)
Դրամական միջոցների գծով	92	(141)
Ընդամենը	2,606	(562)

22. Շահութահարկ

Հազ. դրամ

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկի գծով ծախս	324	22,789
ձեռնարկված հարկի գծով ծախս (փոխհատուցում)	-96	(37)
Շահութահարկի գծով բնդհանուր ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	228	22,752

Ձեռնարկված հարկ

Ձեռնարկված հարկային ակտիվներ

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում ճանաչված	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արձակուրդայինի պահուստի գծով	151	96	247
Ընդամենը	151	96	247

23. Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են Հիմնադրամի հիմնադիրը, հոգաբարձուների խորհրդի անդամները և հիմնական ղեկավար անձնակազմը:

23.1. Գործարքներ ղեկավարության հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Ֆինանսական հաշվետվությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Կազմ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ

Գործարքներ

Հազ. դրամ

Փոխառության ստացում հիմնադրից	69,825	35,150
Փոխառության մարում	(10,000)	(7,400)
Փոխառության գումարի նվիրատվության ճանաչում	(48,000)	(24,050)
Ընդամենը	11,825	3,700

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	69,825	35,150
	(10,000)	(7,400)
	(48,000)	(24,050)
Ընդամենը	11,825	3,700

Մնացորդներ

Հազ. դրամ

Ստացված փոխառություն	59,825	48,000
Ընդամենը	59,825	48,000

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	59,825	48,000
Ընդամենը	59,825	48,000

23.2. Կառավարչական անձնակազմի վարձատրություն

Հազ. դրամ

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	4,076	2,631
Ընդամենը	4,076	2,631

	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	4,076	2,631
Ընդամենը	4,076	2,631

24. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են պարտքային ռիսկը, շուկայական ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ, Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

ա) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պայմանագրային մյուս կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ տրված փոխառությունները, բանկերում պահվող դրամական միջոցները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Հիմնադրամի ղեկավարությունը հավաստացած է, որ տրված փոխառությունը ամբողջությամբ հավաքագրելի և դրանց գծով պարտքային ռիսկ առկա չէ:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների պարտքային ռիսկը կառավարվում է դրամական միջոցները բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

բ) Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ֆինանսական հաշվետվություններ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

«Կողմ» կրթության, մշակույթի և սպորտի զարգացման հիմնադրամ

Հիմնադրամն ունի արտարժույթով ներդրված արժեկտրոնային պարտատոմսեր և արտարժույթով դրամական միջոցների մնացորդ:

Հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ	-	53	3	1,164	62	4
Միևն ժամանակ ժամկետը պահվող արժեկտրոնային պարտատոմսեր	89,666	-	-	87,181	-	-
Ընդամենը	89,666	53	3	88,345	62	4
Ֆինանսական պարտավորություններ						
Ընդամենը	-	-	-	-	-	-
Զուտ արդյունք	89,666	53	3	88,345	62	4

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը պարտավորությունները մարելու նպատակով համապատասխան դրամական միջոցների սակավության կամ բացակայության ռիսկն է: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք թույլ կտան մարելու դրամական հոսքերի հետ կապված պարտավորությունները:

25. Պայմանական դեպքեր

ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում, որի հետևանքով ապահովագրության շատ տեսակներ դեռևս չունեն լայն կիրառում: Քանի դեռ Հիմնադրամի գույքը և գործունեությունը համապատասխան ձևով ապահովագրված չեն, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական գործեր

Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդդեմ Հիմնադրամին չեն ներկայացվել այնպիսի հայցադիմումներ, որոնք կարող են էական սպառնալիք հանդիսանալ վերջինիս նորմալ գործունեության համար:

գ) Հարկային օրենսդրության հակասություններ և երկիմաստություններ

Հայաստանի Հանրապետությունում նոր ձևավորված հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների տեղիք է տալիս: Հարկերը ենթակա են ուսումնասիրության համապատասխան իրավասու մարմինների կողմից, որոնց օրենքով վերապահված է իրավունք կիրառելու պատժամիջոցներ (տուգանքներ, տույժեր) տնտեսավարող սուբյեկտների և նրանց պաշտոնատար անձանց նկատմամբ՝ նրանց կողմից օրենսդրությունը խախտելու համար: Այս պայմաններում գոյություն ունի ռիսկ, որ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների արդյունքում կարող են առաջանալ լրացուցիչ հարկային պարտավորություններ:

Թեև Հիմնադրամի ղեկավարությունը համոզված է, որ հնարավոր լրացուցիչ հարկային պարտավորությունները չեն կարող էական լինել և դրանց գծով պահուստի ձևավորման անհրաժեշտությունը բացակայում է: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինների մեկնաբանությունները կարող են տարբեր լինել՝ դրանցից բխող էական ազդեցություններով:

դ) Պայմանական պարտավորություններ

Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ չունի տրված երաշխավորություններ, երաշխիքներ և այլ պայմանական պարտավորություններ:

26. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտող դեպքեր կամ էական չճշգրտող դեպքեր տեղի չեն ունեցել հաշվետու ամսաթվից հետո մինչև վավերացման ամսաթիվը ընկած, ինչպես նաև մինչև առաջիկա տարեկան եզրակացությունը ընկած ժամանակահատվածներում:

27. Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են 2024թ հունիսի 28-ին:

Տնօրենի ժ/պ

Մարիա Պետրոսյան

